Լիլ Արամի

Մոգական ռեալիզմ

Արթնանում եմ: Բոլորս տանն ենք: Բացի պապիկից: Հայրս ասաց՝ բարձրացել է տանիք: Ինչու՞: Պատրաստվում է մեռնել: Էլի՞: Հաղորդեց՝ մեռնում է՝ բարձրացավ: Սա արդեն երրորդ անգամ է տեղի ունենում: Նախորդին պնդեց՝ առաջին մեռնելուն անպատրաստ էինք, խառնվել էինք իրար, ընկել հյուրերին գոհացնելու հետևից ու անտեսել իրեն: Նույնիսկ դժգոհել էր՝ երեք օր շարունակ խոհանոցից դուրս չէի եկել մոտը նստելու:
Այդ պատճառով կազմակերպեց իր երկրորդ թաղումը: Մենք հավուր պատշաճի գիտակցեցինք կորուստն ու պատրաստ եղանք: Սա պապիկին հերիքեց մի փոքր, ու որոշ ժամանակ անց նա ձավարի պես սկսեց ստուգել մեզ, ճկույթով առանձնացնել թաղման պատկերը փչացնող սև մանրուքները, ու մտցնել աչքներս:
Հիմա նորին չեմ դիմանա: Մահերն ինձ կես մարդ են դարձնում: Գնացողի հետ իմ կյանքը սառույցի պես է: Հալեցնեմ՝ կթրջի ափս, մատներիս արանքով կհոսի կգնա, չհալեցնեմ՝ պիտի ձեռք չտամ, դնեմ սառցախցիկում, կողքին հավի փափկամիս ու դուռն էլ փակեմ վրան:
Պապ: Հիմա էլի ուզում է մեռնել: Ի՞նչ է կատարվում հետը: Մի տեսակ փոխվել է: Պահվածքը: Վերաբերմունքը: Եսիմ: Մեր հանդեպ ուրիշ է: Դե հիմա մեծ է, պիտի մահանա: Բա լավ, ինչու՞ է տանիք բարձրացել: Ինչու՞ հետևից չես գնում: Չուզեց: Ասաց՝ որ մեռելահոտը տնով մեկ չընկնի, ու բարձրացավ: Պապ, ա՛յ պապ, ախր ո՞նց է հնարավոր երրորդ անգամ մեռնել: Որ մի բան կրկնվում է, դեռ շարունակական կլինի: Ախր չի՛ տեղավորվում: Մեր ընտանիքը փշուր-փշուր է լինում: Տատիկը, պապիկը, հետո էլի պապիկը: Պատերը մաղվում են, շաքարափոշու պես ցանվում ամեն մի մահվան վրա: Աղբի տոպրակները լցվում

են տխրությամբ ու ծակվում թափելու ճանապարհին: Սա ի՞նչ հաշիվ է: Ասում են մեկ, երկու, մեկ, երկու, մեկ, ա՜ջ դարձ, հավասարությունը դեպի կենտրոնական փոսը, կա՜նգ առ: Հետո ձեռքներս մեջքներին քայլո՜վ դարձ: Բարի վերադարձ ապրելու:

Ախր պապիկը, որ առաջին անգամ մահացավ, լաց եղանք երկար, ուշքի չեկանք երկար: Հետո որ նորից մահացավ, ինչ է թե դուրը չէր եկել մեր հյուրասենյակը, ստիպված եղանք այդ քառսուն գազխոր ալյուրափոշուց դուրս բերել իր հայրական տունը ու մի քանի կենդանու կմախք ևս: Հիշու՞մ ես ինչքան թափ տվեցինք: Բուրդի պես ծեծում էինք, հա ծեծում, բայց հողի նստվածքն ամենևին էլ չէր փափկում: Նույնիսկ հողատար բերեցինք:

Հայրական տան սառը, անհարդար պատերը նա երևի ավելի էր համակրում, քան մեր հարմարավետ բնակարանինը: Ասաց՝ այ հիմա հանգիստ կմեռնեմ: Միայն թե ինձ հորս պես սենյակի մեջտեղում կդնեք, քյուրսու վրա ու հետո ինչ անում եք՝ արեք: Ես ու քույրս մի կերպ ջրեցինք տունը, հողը խոնավացավ ու քիչ-քիչ մաքրվեց; Պապիկին խնդրեցինք փոքր-ինչ համբերի՝ մինչև հյուրերի գալը տունը կարգի բերենք: Նա չդիմացավ փոշուն ու դուրս եկավ հայրական բակում պտտվելու: Իրենց տունը վախենալու մռայլ էր: Սևուսպիտակ ֆիլմերի պես: Հարևանները վաղուց մեռել են, տներն էլ հետը: Մնացել ենք մենք ու փոշին: Պապիկի հայրական տան արտաշիրիմումից հետո . . . փոշին գնալով բարձրանում էր, դուրս եկանք բակ շունչներս տեղը բերելու համար: Օձ էր սողում քարերի վրայով ու նայում դեմքներիս: Չկծե՛ս: Էսօր պապիկի թաղումն է: Տները կիսատ ենք մաքրել: Օձը առաջացավ: Քույրս հրամայեց՝ չվախենաս: Սոված է՝ կեր է փնտրում: Իրեն ի՞նչ մեր պապիկի մահանալը: Օձը հասավ մեր ոտքերի մոտ ու մեծացավ, մեծացավ, մեծացավ . . . ներս վազեցինք: Բայց նա ճեղքեց հողոտ պատուհանը, փնչաց փոշշուց ու բերանը բացեց ինձ համար: Սկզբից փոշտաց, հետո բացեց: Քույրս տանը եղած բոլոր քարերը տեղավորեց օձի բերանումը: Նա խելոք կուլ տվեց, բերանում փշրեց ու կուլ տվեց ու անհետացավ: Համ տունը մաքրվեց, համ՝ օձը տարածքից: Պապիկը տուն մտավ: Բարկացավ: Չվերջացրի՞ք: Էդ օձին հետո էլ կկերակրեիք: Ե՞ս եմ կարևոր, թե դա՞:

Սա պապիկի երկրորդ մահանալն էր: Չեմ հասկանում՝ ինչը սրտով չի հիմա: Երրորդն ինչի՞ն է պետք: Օրինակ՝ մայրական պապս մի անգամով բավարարվեց: Բարի մարդ էր: Շատ չտանջեց:

Պապի՛կ: Բարձրանում եմ վերև: Նեղ է տանիքում: Ժամանակն այստեղ հանդես է գալիս սպիտակամազ տատիկի հանդերձով, որը սարդերը գործել են հատուկ մոտեցմամբ: Պապիկը փորի վրա է: Չի խոսում: Պապի՛կ, ասա՝ ինչ մտածում ես: Լռություն: Պապի՛կ, տները լավ չէ՞ինք մաքրել: Թափթված բա՞ն էիր նկատել: Ավելի կոկիկ էիր պատկերացնում: Ախր հասկացի՛ր՝ մի կողմից քննությունները, մյուս կողմից աշխատանքը: Ծայրը ծայրին հասցրինք: Պապի՞կ: Խասի՛ր: Մոլորակի մարդիկ խոսքի միջոցով են տարբերվում այլ աշխարհաբնակներից, դու դեռ էստեղ ես չէ՞ : Դե ասա՛՝ ինչ մտածում ես: Փաթաթվում եմ մեջքին, սարսափում նրան սառը զգալու մտքից: Ներսից ձայն է գալիս: Բան չեմ հասկանում: Խոսու՞մ է, թե՞ միջի կուտակված գազերն են արդեն . . .
Արի ներքև իջնենք պառկիր մի քիչ: Չէ՛, մա՛մ: Արի՛, կքնես՝ կանցնի: Արթնանում եմ: Ոտքերս անտանելի ցավում են: Հաստատ էլի երակներն են: Բժիշկն ասաց՝ բան չկա, ենթամաշկդ բարակ է, ամեն ինչ թափանցում է: Երակների սարքը ցավը չի զգում: Նկարում է՝ պրծավ գնաց:
Ուսումնասիրում եմ ծունկս, հետո սրունքներս: Որդե՛ր, Աստված իմ, որդե՞ր: Գլուխները խրած սրունքներիս մեջ: Թպրտում են սուր կծկումներով: Մա՛մ, հասի՛ր: Ձեռք չտա՛ս, թող հայրդ նայի: Պա՛պ հասի՛ր: Պա՛պ: Հայրս չկա: Պառկի՛ր, գա՝ ձայն կտամ: Մա՛մ, ախր անգլուխ որդեր են, ով գիտի՝ արդեն կշտանալու վրա են: Հասարակ անձրևորդեր են: Մեզ անձրև ո՞րտեղից ախր: Գիշերն էլի լա՞ց ես եղել: Մի քիչ: Էդ է էլի: Մա՛մ: Հիմա կկրծեն՝ կվերջանամ: Չես վերջանա՝ մեծ աղջիկ ես: Մա՛մ, բայց որդեր են: Ես կենսաբան եմ, գլուխ եմ հանում, ոչ մի լուրջ բան: Տրորում է մի քիչ: Ցավու՞մ է: Էլ չէ, տեսքից եմ վախենում: Մի՛ նայիր: Վերմակով ծածկվիր՝ չես տեսնի: Ա՛յ այդպես: Քնի՛ր: Արթնանում եմ: Չքնես հանկարծ: Ասում է ինչ-որ մի բուժքույր: Ողջույն: Ի՛նձ նայիր, չքնես: Շնորհավորում եմ: Ինչի՞ համար: Ծննդաբերությունը հաջող անցավ: Ու՞մ ծննդաբերությունը: Ձեր: Ես հղի՞ էի: Ինն ամսական: Ախ հա՜, հղի էի: Ճիշտ որ: Ինչքա՜ն ծանր էին այդ ամիսները: Այո՛, Դուք ծանր եք տարել և բարեբախտաբար չմեռաք: Ախ հա՜, ճիշտ որ պիտի մեռնեի: Հայտնե՛ք շնորհակալություն, որ փրկվեցիք: Շնորհակալ եմ: Ինչի՞ համար, դա մեր աշխատանքն է: Դուք ինձ փրկել եք: Այո փրկել ենք, հայտնե՛ք շնորհակալություն: Շնորհակալությու՛ն: Ձեր ծննդաբերությունը բարեհաջող անցավ: Իսկապե՞ս: Այո, չէ՞ որ դուք ողջ եք: Կարծես թե՝ այո: Այդ դեպքում խնդրում եմ բերե՛ք տղայիս տեսնեմ: Ճիշտն ասած Ձեզ մոտ մեռելածնություն էր,

մենք Ձեր տղային թափեցինք: Ի՞նչ: Այդ ի՞նչ բառ է: Ո՞նց թե՝ թափեցինք: Հա՛, մեռած էր ծնվել, թափեցինք, զարմանալու ի՞նչ կա: Աստվա՜ծ իմ չէէէ . . . իսկ Դուք ասում էիք՝ ամեն ինչ բարեհաջող է անցել: Այո՛, բարեհաջող էր՝ Դուք ողջ եք: Ես մեռած եմ: Ո՛չ, Դուք ողջ եք: Իսկապե՞ս: Այո՛, շարժեք ձեր ձեռքերը: Շարժվում են: Համոզվեցի՞ք՝ ողջ եք: Ո՛չ, մեռած եմ: Դուք ողջ եք: Մի՛ եղեք այդքան անշնորհակալ: Մենք ձեզ փրկել ենք: Դուք սպանել եք ինձ: Հիմա Դուք կքնեք, ու ամեն բան կանցնի:
Արթնանում եմ: Ուշացանք, վե՛ր կաց: Ասում է ամուսինս: Ինչի՞ց: Գերեզման ենք գնում: Մա՞րդ է մահացել: Հինգ տարի առաջ: Ի՜նչ ցավալի է: Դե վե՛ր՝ գնանք: Մեր ներկայությունը պարտադի՞ր է: Ամենաշատը դու էիր ուզում գնալ: Դե եթե ուզում էի՝ գնանք: Վարդեր եմ գնել: Բայց ես վարդեր չեմ սիրում: Քեզ համար չի: Բա ու՞մ: Գերեզմանների: Հա՜: Ում որ տանում ենք, վարդեր է սիրում երևի: Չե՞ս հիշում՝ այգում տնկում էր ու չէր քաղում երբեք: Չեմ հիշում: Ժամանակը մոռացնել է տալիս ամեն ինչ: Գուցե: Երեխային թողել եմ տատիկի մոտ: Հա՜, երեխաները տատիկներին սիրում են, երես են տալիս, այնպես որ՝ լավ՛ է, բայց ու՞մ երեխային: Մեր: Իսկապե՞ս, ես մա՞յր եմ ուրեմն: Այն էլ երկու երեխայի: Օհո՜, ուրեմն փորձառու եմ: Դե վե՛ր, լավ, իրոք կուշանանք: Հագնվում եմ: Թեյե՞նք հետո գնանք: Ուշ կլինի: Գերեզմանները չեն նեղանա: Թող մարդիկ գնան, մենք կմիանանք մի փոքր ուշ: Առաջինը մենք պիտի լինենք: Ինչու՞: Որովհետև այսօր մորդ ծնունդն է: Ա՜խ ոնց էի մոռացել: Լավ շուտ գնանք ուրեմն ու գանք պատրաստվելու: Ինչի՞ն: Ծնունդին: Սիրելի՜ս: Ասում է ամուսինս: Միայն չասես՝ գործեր կան՝ չենք գնալու: Գնալու ենք իհարկե, հիմա էլ գնում ենք: Բա գերեզմանն՞ը: Մորդ ծնունդներն արդեն այնտեղ են նշվում: Ո՞նց թե: Մայրիկը խիստ կվիրավորվի: Տանենք քո այդ գնած վարդերը տանք գերեզմաններին ու գնանք: Սիրելի՛ս, մայրդ գերեզմաններում է: Ուրեմն ընդհանու՞ր ծանոթի է գերեզմանը: Ահա՛: Ո՞վ է գերեզմաններում: Մայրդ: Արթնանում եմ: Ուզում եմ բակ դուրս գալ մի քիչ պտտվելու: Նայում եմ՝ ամուսինս լաց է լինում: Առաջին անգամ: Լացից մազերը ճերմակել են, դեմքին կնճիռներ կան: Ո՜նց մեծացավ: Երեկ առողջ տեսք ուներ, այսօր՝ կոպիտ է հագում: Մաշկը թոշնել է: Դեմքին գույն չկա: Մի տեսակ մեռելի է նմանվում: Չեմ ասի՝ չնեղսրտի: Լաց է լինում: Ի՞նչ է եղել, սիրելի՛ս: Ինձ ինչու՞ չասացիր, որ գնում ես: Ե՞ս: Դու՛, դավաճա՛ն, դու՛: Գնացիր առանց որևէ զգուշացման: Գերեզմանն՞ը, թե՞ երեխաներին տատիկի տնից բերելու, կներե՛ս, չգիտեի՝

կնեղացնեմ քեզ: Ինչու՞, հիմա՛ր աղջիկ, ախր քեզ այնքան էի սիրում: Սիրելի՛ս, ինչեր ես խոսում, ուշքի՛ արի: Վատ երա՞զ ես տեսել: Լռի՛ր: Լռում եմ: Ամուսինս լաց է լինում ու արցունքները կաթում են դեմքիս: Տեղս տեղ չի տալիս: Ուզում եմ հարցնել՝ ինչի՞ց է նեղվել, բայց և հարգում եմ խնդրանքն ու լռում: Երկար լռելուց հետո աչքս կպնում է: Չեմ արթնանում: